

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ/ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Շահերի բախման հնարավոր դեպքերը

1.1. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում շահերի բախման հնարավոր սցենարները հետևյալն են՝

1.1.1. Հաճախորդին շուկայական գնից բարձր/ցածր արժեթղթերի վաճառք/առք Բանկի, Բանկի այլ Հաճախորդի կամ Բանկի աշխատակցին պատկանող արժեթղթերի պորտֆելից՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Բանկի ներկայացված Հանձնարարականի էական պայմանները:

1.1.2. Հաճախորդին կեղծ, ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրում, ինչի արդյունքում Հաճախորդը կայացնում է ոչ ճիշտ որոշումներ և ներդրումներ է իրականացնում իր համար անընդունելի ակտիվներում:

1.1.3. Հաճախորդի կողմից Բանկին տրամադրած տեղեկատվության ոչ բարեխիղճ օգտագործում, այսինքն՝ օգտագործում ի հաշիվ Բանկի կամ Բանկի այլ Հաճախորդի, որի արդյունքում Հաճախորդը կորցնում կամ չի ստանում ակնկալվող օգուտները:

1.1.4. Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացում, որոնք կարող են լինել ի շահ Բանկի մեկ Հաճախորդի և ի վնաս՝ մեկ այլ Հաճախորդի:

1.1.5. Հաճախորդների միջոցների օգտագործում ի շահ Բանկի ներդրումային ռազմավարության իրականացման:

1.2. Վերոհիշյալ դեպքերը շահերի բախման սպառիչ ցանկը չէ: Ներդրումային գործունեությունը ուղեկցվում է նաև Շահերի բախման այլ դեպքերով:

2. Հաճախորդների շահերի պաշտպանությունը

2.1. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է՝ ելնելով բացառապես հաճախորդի շահերի պաշտպանությունից և ներդրումային ծառայություններ է մատուցում անկողմնակալության, ճշտապահության, բարեխղճության, արհեստավարժության սկզբունքներով: Վերոհիշյալ շահերի պաշտպանման նպատակով Բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

2.1.1. պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,

2.1.2. չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Բանկի կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ուճացումը,

2.1.3. Հաճախորդի շահերը համարել գերակա Բանկի և բանկի աշխատակիցների շահերի նկատմամբ՝ Հաճախորդի Հանձնարարականի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ:

3. Շահերի բախման կանխարգելման և պատվերների ընդունման/կատարման միջոցառումները

3.1. Շահերի հնարավոր բախումը կանխարգելելու նպատակով Բանկում կիրառվում են հետևյալ միջոցառումները՝

3.1.1. Իր կամ Հաճախորդի անունից և հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և Պատասխանատու աշխատակիցը միջոցառումներ են ձեռնարկում, որ դրանք կատարվեն անկողմնակալորեն, անհապաղ և ճշգրտորեն:

3.1.2. Բանկի կողմից պատվերները ընդունվում և կատարվում են ՀՀ ֆոնդային բորսայում համապատասխան հայտ ներկայացնելու միջոցով, և միջազգային շուկաներում՝ Բանկի գործընկերորդ անձանց Հանձնարարականը փոխանցելու միջոցով:

3.1.3. Այլ հավասար պայմաններ ունեցող Հանձնարարականները կատարվում են ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում կամ առկա է Հաճախորդի կողմից հատուկ ցուցումներ:

3.1.4. Միջազգային շուկաներում պատվերներն ընդունվում և կատարվում են լավագույն գինը, կատարման արագությունը և ծախսերի մինիմալացումն ապահովող հատուկ ալգորիթմերով: Այդ ալգորիթմները շարունակաբար փոփոխվում և կատարելագործվում են՝ հարմարեցվելով շուկայի փոփոխություններին, նոր բորսաների պահանջներին, առևտրային նոր կանոններին և այլ գործոնների:

3.1.5. Ավելի լավ արդյունքի հասնելու նպատակով Բանկը կարող է համախմբել իր հաճախորդի պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ հաճախորդի պատվերի հետ և այդ կերպ իրականացնել դրանք, եթե այդ համախմբումն որևէ հաճախորդի համար չի հանգեցնում ավելի վատ արդյունքի, քան այն դեպքում, երբ նրա պատվերը կատարվեր առանձին, և եթե այն բխում է հաճախորդների շահերից:

3.1.6. Բանկի աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանմանը և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրության և բանկի ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին:

3.1.7. Բանկի աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի վերջնական նպատակն է՝ Բանկի շահերից բխող գործարքներ կնքելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը, կամ, որը հակասում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին:

3.1.8. Հաճախորդի՝ արժեթղթերով գործարքներ իրականացնելու Հանձնարարականների առկայության դեպքում, Բանկը, նախքան Հաճախորդի Հանձնարարականի կատարումը, պետք է խուսափի միևնույն արժեթղթերով նույնական գործարք իրականացնելուց:

Հաճախորդ՝

Անուն ազգանուն/անվանում

Սկորագրություն